# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

**<<ՁՀ-ԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

**գ. Ձորք** **_02_ _հոկտեմբերի_ _2017թ._**
**ժամը _15⁰⁰_**

**Մասնակցությամբ՝**
Հանձնաժողովի նախագահ՝ **Լ. Թադևոսյան**
Հանձնաժողովի անդամներ՝ **Ա. Առաքելյան, Ա. Սաֆարյան**
Հանձնաժողովի քարտուղար՝ **Շ. Հարությունյան**

## 1. Տեղեկատվություն գնվելիք աշխատանքի գնի և հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

1.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ գնման ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքի գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Չ/հ | Աշխատանքի | |
|---|---|---|
| | անվանումը | գնման հայտով սահմանված գինը (ՀՀ դրամ) |
| 1 | Կոտայքի մարզի Ձորք համայնքի փողոցների ասֆալտապատման և ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգման աշխատանքներ | 19180000 |

1.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների | | |
|---|---|---|---|
| | անվանումը | գտնվելու վայրը (հասցեն) | կապի միջոցները |
| 1 | <<Վահրադյանշին>> ՍՊԸ | ք. Ստեփանավան, Չարենցի 175 | Էլ. հասցեն՝ vahradyanshin@yandex.ru, Հեռ. 077-88-05-89 |
| 2 | <<ՇԻՆՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ | ք. Երևան, Աշտարակի խճուղի 47/18 | Էլ. հասցեն՝ shinplyus@mail.ru, Հեռ. 077-77-77-67 |
| 3 | <<ԲԱԼԱՀՈՎԻՏ-1>> ՍՊԸ | Կոտայքի մարզ, գյուղ Բալահովիտ | Էլ. հասցեն՝ balahovit-1@yandex.ru, Հեռ. 091-42-83-94, 060-75-00-68 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

## 2. Տեղեկատվություն հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման համապատասխանության մասին

2.1 <<Վահրադյանշին>> ՍՊԸ-ի կողմից հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

2.2 <<ՇԻՆՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ-ի կողմից հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

2.3 <<ԲԱԼԱՀՈՎԻՏ-1>> ՍՊԸ-ի կողմից հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**3. Տեղեկատվություն բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

3.1 <<Վահրադյանշին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

3.2 <<ՇԻՆՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

3.3 <<ԲԱԼԱՀՈՎԻՏ-1>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**4. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկների մասին**

4.1 Մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկները ներկայացված են ստորև.

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ), ընդ որում՝ | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| **Չափաբաժին N 1** | | | | |
| 1 | <<Վահրադյանշին>> ՍՊԸ | 11000000 | 2200000 | 13200000 |
| 2 | <<ՇԻՆՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ | 11079850 | 2215970 | 13295820 |
| 3 | <<ԲԱԼԱՀՈՎԻՏ-1>> ՍՊԸ | 8312823 | 1662565 | 9975388 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**5. <<ՁՀ-ԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին**

5.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

- Հրավերի պահանջների նկատմամբ բավարար հայտ ներկայացրած <<ԲԱԼԱՀՈՎԻՏ-1>> ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից, <<Վահրադյանշին>> ՍՊԸ-ին՝ երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից, <<ՇԻՆՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ-ին՝ երրորդ տեղ զբաղեցրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**6. Գնահատող հանձնաժողովի կողմից կատարվելիք գործողությունների մասին**

6.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ.

բ) Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017 թվականի հոկտեմբերի 06-ը ներառյալ, ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը.

գ) 6.1 կետի բ) ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ, առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**Հանձնաժողովի նախագահ՝** ______________ **Լ. Թադևոսյան**
(ստորագրությունը)

**Հանձնաժողովի անդամներ՝** ______________ **Ա. Առաքելյան**
(ստորագրությունը)

______________ **Ա. Սաֆարյան**
(ստորագրությունը)

**Հանձնաժողովի քարտուղար՝** ______________ **Շ. Հարությունյան**
(ստորագրությունը)